ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ավագանի

**ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»**
**ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*

26.06.2025թ.

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ձեզ եմ ներկայացնում Գյումրի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից կազմված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու շահերը ներկայացնելու համար ներկայացուցչին լիազորելու մասին» որոշման նախագիծը:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը՝ վեր նշված նախագիծն ընդգրկել հուլիսի 1-ին կայանալիք արտահերթ նիստի օրակարգ:

Կից ներկայացնում եմ ձևաթուղթը՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ 2025 թվականի հուլիսի 1-ին՝ ժամը 14:00-ին, արտահերթ նիստ գումարելու:

Կից ներկայացվում է նաև որոշման նախագիծը: Նախագծի մեջ նշված դատական գործերին կարող եք ծանոթանալ ԴատաԼեքս դատական տեղեկատվական համակարգում:

Առդիր՝ 24 էջ:

ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՔՆԱՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 26.06 2025 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 8753

«25» 06 2025թ.

Կ.Տ.

ՁԵՎԱԹՈՒՂԹ N 10-25

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ 202 5 թ. հուլիսի -ի 1 -ին՝ ժամը 14:00 -ին
(ամիս) (օր)
արտահերթ նիստ գումարելու

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու

(օրակարգային հարցի (հարցերի) նախագծի (նախագծերի) վերնագիրը)

Գյումրի համայնքի ավագանու շահերը ներկայացնելու համար ներկայացուցիչ ընտրելու մասին

որոշման նախագծի (նախագծերի) քննարկման օրակարգային հարցով (հարցերով) արտահերթ նիստ գումարելու նախաձեռնության մասին Գյումրի համայնքի ավագանու անդամների ստորագրությունները

| Հ/հ | Նախաձեռնողների անուն, ազգանուն, հայրանուն | Խմբակցության անվանում | Ստորագրություն |
|---|---|---|---|
| 1 | [illegible] | «Քաղաքացիական պայմանագիր» | [signature] |
| 2 | [illegible] | «Քաղաքացիական պայմանագիր» | [signature] |
| 3 | [illegible] | «[illegible] դաշինք» | [signature] |
| 4 | [illegible] | «[illegible] դաշինք» | [signature] |
| 5 | [illegible] | «Քաղաքացիական պայմանագիր» | [signature] |
| 6 | [illegible] | «Քաղաքացիական պայմանագիր» | [signature] |
| 7 | [illegible] | «Քաղաքացիական պայմանագիր» | [signature] |
| 8 | [illegible] | «Քաղաքացիական պայմ.» | [signature] |
| 9 | [illegible] | «Քաղաքացիական պայմ.» | [signature] |
| 10 | [illegible] | «Քաղաքացիական պայմ.» | [signature] |
| 11 | [illegible] | «Քաղաքացիական պայմ.» | [signature] |
| 12 | [illegible] | «Քաղաքացիական պայմ.» | [signature] |
| 13 | [illegible] | «Քաղաքացիական պայմ.» | [signature] |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ**

**« » հունիսի 2025 թվականի N-**

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՇԱՀԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական գործընթացն ապահովելու անհրաժեշտությունը և փաստաբանական ծառայությունների մատուցման գնման թիվ «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-24/24» պայմանագիրը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ, 22-րդ, 24-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 16-րդ հոդվածի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**
**Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Լիազորում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբան Իրինա Լևոնի Հակոբյանին (փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 831, հասցե՝ ՀՀ, Երևան, Շինարարների փողոց, 10/1 շենք, բնակարան 61, նույնականացման քարտ՝ 013299508, տրված՝ 21.10.2022թ. 001 կողմից) լինել Գյումրի համայքի ավագանու ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանում, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատում՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումները դատական կարգով վիճարկելու՝ պատական /համայնքային/ շահերի պաշտպանության հայցեր ներկայացնելու նպատակով, **հանդես գալ բոլոր այն իրավունքներով, որը** տրված է հայցվորին, **օժտելով նրան,** ստորագրել հայցադիմումներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքի պատասխաններ, ներկայացնել միջնորդություններ, ինչպես նաև Գյումրի համայնքի ավագանու շահերի պաշտպանության նպատակով կատարել բոլոր այն անհրաժեշտ գործողությունները, որոնք առնչվում են սույն հանձնարարության հետ, անհրաժեշտության դեպքում հանդես գալ նաև համապատասխան պետական ու տեղական ինքնակառավարման

մարմիններում, կատարել հարցումներ և ստանալ սույն հանձնարարության առնչվող անհրաժեշտ տեղեկություններ:
Նշված լիազորությունները տրվում են երկու տարի ժամկետով:

2. Սույն որոշումը որպես փաստաբանի լիազորությունները հաստատող փաստաթուղթ տպագրվում է 24 բնօրինակից ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ□ թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման վարչական գործերով դատարանին տրամադրելու նպատակով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Զեկուցող՝ Քնարիկ Հարությունյան**
**Հարակից զեկուցող՝ Իրինա Հակոբյան**

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՇԱՀԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

**Որոշման ընդունումը պայմանավորված է հետևյալով□**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության՝ 2024 թվականի հունիսի 11-ի թիվ 05.1/05.6/10532-2024 և 2024 թվականի հունիսի 19-ի թիվ 05.1//11292-2024 գրությունները, ինչպես նաև Շիրակի մարզի դատախազության կողմից 2024 թվականի հունիսի 5-ի թիվ 1634-24 գրությամբ Գյումրի համայնքի ավագանուն ներկայացված առաջարկությունները և Գյումրի համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Քնարիկ Հարությունյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ներկայացրած 2024 թվականի հուլիսի 22-ի Զ/1472 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին 26□07□2024թ□ կայացած ավագանու արտահերթ նիստի արդյունքներով որոշում է կայացրել ՀՀ վարչական դատարան ներկայացնել պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայցեր՝ Գյումրի համայնքի ղեկավարի թվով 24 որոշումներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու մասին պահանջներով: Ընդ որում՝ Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 2-րդ բաժնի 9-րդ կետի համաձայն՝ ավագանին կազմված է 33 անդամից: Ավագանու 26□07□2024թ□ արտահերթ նիստի արձանագրության համաձայն՝ համայնքի ավագանու նիստին ներկա են եղել ավագանու 21 անդամները, քվեարկությանը մասնակցել են 19 անդամները, որոնց ազգանուններն ամրագրված են որոշմամբ: Որոշումը կայացվել է 19 կողմ, 0 դեմ և 0 ձեռնպահ արդյունքներով, Նույն որոշման 2-

րդ կետով Գյումրի համայնքի ավագանին Գյումրի համայնքի ղեկավարին առաջարկել է Գյումրի համայնքի շահերի պաշտպանության համար ձեռք բերել փաստաբանական ծառայություն:

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ□ թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական գործընթացն ապահովելու նպատակով Գյումրի համայնքի ավագանու ու հայտարարված «գնանշման հարցման» ընթացակարգի արդյունքներով հաղթող ճանաչված, ԱՁ Իրինա Լևոնի Հակոբյանի միջև 01□10□2024թ-ին կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման գնման թիվ «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-24/24» պայմանագիրը:

08□10□2024թ□-ին Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 26-ի թիվ 161-Ա որոշման ընդունմանը «կողմ» քվեարկած անդամների ստորագրությամբ փաստաբան Իրինա Լևոնի Հակոբյանին տրվել է թվով 24 լիազորագրեր, որով փաստաբան Իրինա Լևոնի Հակոբյանը լիազորվել է «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանում,Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատում հանդես գա որպես Գյումրի համայնքի Ավագանու լիազորված ներկայացուցիչ՝ Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 26-ի թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումները դատական կարգով վիճարկելու՝ պետական /համայնքային/ շահերի պաշտպանության հայցեր ներկայացնելու նպատակով, ստորագրի հայցադիմումներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, ինչպես նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոքի պատասխանները, ներկայացնի միջնորդություններ, Գյումրի համայնքի Ավագանու շահերի պաշտպանության համար կատարի բոլոր այն անհրաժեշտ գործողությունները, որոնք առնչվում են սույն հանձնարարության հետ:»

Գյումրի համայնքի ավագանու անունից փաստաբան Իրինա Հակոբյանի կողմից ՀՀ վարչական դատարան են ներկայացվել թվով 24 հայցադիմումներ: Որպես հայցվորի ներկայացուցչի լիազորությունները հավաստող փաստաթուղթ՝ Դատարան են ներկայացվել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 19 անդամների կողմից ստորագրված 08.10.2024թ. լիազորագրերը:

Գյումրի համայնքի Ավագանու 2024 թվականի հուլիսի 26-ին կայացված թիվ 161-Ա որոշմամբ սահմանված՝ վիճարկվող Գյումրի համայնքի ղեկավարի 24 որոշումների վիճարկման նույնական փաստական հանգամանքներով վարչական գործերով հայցադիմումի վարույթ ընդունելու հարցի քննարկման արդյունքում ստորադաս դատարանները ցուցաբերել են իրար հակասող մոտեցումներ և կայացրել իրար հակասող մեկնաբանություններով որոշումներ:

Մասնավորապես՝ հակասական են մեկնաբանվել փաստաբանին տրված լիազորագրերի պատշաճ լինելը, այն է՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ գործող օրենքին համապատասխան տրված լինելը:

Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ Գյումրի համայնքի Ավագանու 2024 թվականի հուլիսի 26-ին կայացված թիվ 161-Ա որոշման հիման վրա ՀՀ վարչական դատարանին ներկայացվել են թվով 24 հայցադիմումներ, որոնցից՝

- թվով 6 գործերով՝ հայցադիմումներն ի սկզբանե ընդունվել են վարույթ (թիվ ՎԴ5/0803/05/24, թիվ ՎԴ/14562/05/24, թիվ ՎԴ/16255/05/24, թիվ ՎԴ/16462/05/24, թիվ ՎԴ/16535/05/24, թիվ ՎԴ/16635/05/24 վարչական գործեր),
- թվով 3 գործերով՝ թիվ ՎԴ5/0800/05/24, թիվ ՎԴ5/0103/05/25 և թիվ ՎԴ/15436/05/24 վարչական գործերով, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշման (վերաքննիչ բողոքները բավարարվել են) հիմքով, հայցադիմումներն ընդունվել են վարույթ,
- թվով 11 գործերով՝ թիվ ՎԴ/15446/05/24, թիվ ՎԴ/15748/05/24, թիվ ՎԴ/16496/05/24, թիվ ՎԴ5/0804/05/24, թիվ ՎԴ5/0125/05/25, թիվ ՎԴ5/0129/05/25, թիվ ՎԴ5/0131/05/25, թիվ ՎԴ/16654/05/24, թիվ ՎԴ/14599/05/24, թիվ ՎԴ5/0146/05/25, և թիվ ՎԴ5/0145/05/25 վարչական գործերով ներկայացված են վճռաբեկ բողոքներ,
- թվով 4 գործերով՝ թիվ ՎԴ5/0200/05/25, թիվ ՎԴ5/0050/05/25, թիվ ՎԴ50202/05/25 և թիվ ՎԴ5/0143/05/25, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը դեռևս որոշումներ չի կայացրել:

Սույն թվականի հունիսի 19-ին ստացվել է ՀՀ վճռաբեկ դատարանի ՎԴ/16496/05/24, թիվ ՎԴ5/0804/05/24 և թիվ ՎԴ/14599/05/24 վարչական գործերով «վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումները, որոնցով Գյումրի համայնքի ավագանու կողմից 08․10․2024թ․-ին փաստաբան Իրինա Հակոբյանին տրված լիազորագրի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը․

*«Գործող իրավակարգավորումների համաձայն՝ համայնքի ավագանին իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որում քննարկվող հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ և ուղերձներ՝ կազմելով դրանց վերաբերյալ արձանագրություններ: Ընդ որում՝ համայնքի ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Նիստն իրավազոր լինելու դեպքում համայնքի ավագանին նիստին ներկա կամ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դեպքում նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ընդունում է որոշումներ, որի մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու*

անդամների ազգանունները: Համայնքի ավագանու որոշումը ստորագրում է նիստը վարողը:

***Այսինքն՝ դատարանում ներկայացուցչի միջոցով հանդես գալու կամահայտնության դեպքում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով լիազորագիր տալու հնարավորության բացակայության պայմաններում, համայնքի ավագանու կողմից ներկայացուցչին լիազորություններ վերապահելու հարցը պետք է քննարկման առարկա դարձվի համայնքի ավագանու նիստում և նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ որոշում կայացվի համայնքի ավագանու շահերը դատարանում ներկայացնելու համար մեկ կամ մի քանի անձի լիազորություններ վերապահելու մասին: Ընդ որում՝ նիստը վարողը պետք է ստորագրի համայնքի ավագանու որոշումը, որի բնօրինակը, որպես համայնքի ավագանու ներկայացուցչի լիազորությունը հավաստող պատշաճ ապացույց, պետք է ներկայացվի դատարան:***

*Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ համայնքի ավագանու ներկայացուցչի լիազորությունը հավաստող պատշաճ ապացույց է հանդիսանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ իրավակարգավորումների պահպանմամբ ընդունված՝ ներկայացուցչին լիազորություններ վերապահելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման բնօրինակը:*

*Տվյալ դեպքում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից, որպես վերջինիս ներկայացուցիչ, վճռաբեկ բողոք է ներկայացրել Իրինա Հակոբյանը, սակայն վճռաբեկ բողոքին կից չի ներկայացրել, ինչպես նաև սույն վարչական գործում առկա չէ վճռաբեկ բողոք բերելու համար վերջինիս լիազորությունը հավաստող պատշաճ ապացույցը:*

*Ինչ վերաբերում է վարչական գործում առկա՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 19 անդամների կողմից ստորագրված 08.10.2024 թվականի լիազորագրին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ չի կարող հանդիսանալ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից դատարանում ներկայացուցչություն իրականացնելու Իրինա Հակոբյանի լիազորությունը հավաստող պատշաճ ապացույց:*

*...Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ նշված սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար անհրաժեշտ է սահմանել տասնհինգօրյա ժամկետ՝ սույն որոշումը ստանալու պահից:»:*

ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշումներով արձանագրած դիրքորոշմամբ պամանավորված անհարաժշտություն է առաջացել փաստաբան Իրինա Հակոբյանին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ ավագանու նիստով ընդունված որոշմամբ, լիազորություններ տրամադրել Գյումրի համայնքի ավագանու անունից արդեն իսկ ՀՀ վարչական դատարան ներկայացված և

դատանի վարույթում քննվող թվով 24 վարչական գործերով դատավարական գործողություններ կատարելու համար:

## ՏԵՂԵԿԱՆՔ
## «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՇԱՀԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ ԼԻԱԶՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ավագանու շահերը ներկայացնելու համար ներկայացուցչին լիազորելու մասին որոշման ընդունման կապակցությամբ Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ԱՅԼՈՅԵՐ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
**ILawyer Law Firm**
*Հայաստան, 0010, Երևան, Մ.Խորենացի 26ա, «Խորենացի» բիզնես պլազա, գրասենյակ 122*
*հեռ՝ +37412567333, բջջ.՝ +37455567333, +37498567333,, viber: +37455567333*
*էլ.փոստ՝ info@ilawyer.am, lawyerhakobyan@gmail.com կայք՝ www.ilawyer.am*

№ ՀԻ-185/06-25
19.06.2025թ.

**ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 26-ի N 161-Ա որոշման հիման վրա Գյումրու քաղաքապետի /համայնքի ղեկավարի/ 2003-2018 թվականների թվով քանչորս որոշումներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու մասին պահանջներով դատական հայցեր հարուցելու նպատակով դեռևս 2024 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ ՀՀ վարչական դատարանում արդեն իսկ մուտքագրված են եղել բոլոր հայցադիմումները, սակայն դրանցից այս պահի դրությամբ վարույթ են ընդունված միայն 9 դատական գործերը, իսկ մնացած գործերով ներկայացված են վճռաբեկ բողոքներ: Մասնավորապես՝ ստորադաս դատարանները հայցադիմումները վերադարձրել են, փաստաբանին տրված լիազորագրերը ոչ պատշաճ լինելու հիմքով և իմ կողմից ստորադաս դատարանների որոշումները բողոքարկվել են դատական բոլոր ատյաններում:

Արդյունքում՝ այսօր ավագանու կողմից իմ lawyerhakobyan@gmail.com էլեկտրոնային փոստին ուղարկվել է թիվ ՎԴ/14599/05/24 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.05.2025թ. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը, որով սահմանվել է 15 օրյա ժամկետ թերությունները շտկելու և բողոքը կրկին ներկայացնելու համար:

Անհրաժեշտ եմ համարում Ձեր ուշադրությանն արժանացնել ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/14599/05/24 վարչական գործերով կայացված որոշմամբ արձանագրած հիմնավորումները, մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը՝ **մեջբերում եմ՝** *«Գործող իրավակարգավորումների համաձայն՝ համայնքի ավագանին իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որում քննարկվող հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ և ուղերձներ՝ կազմելով դրանց վերաբերյալ արձանագրություններ: Ընդ որում՝ համայնքի ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Նիստն իրավազոր լինելու դեպքում համայնքի ավագանին նիստին ներկա կամ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դեպքում նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ընդունում է որոշումներ, որի մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները: Համայնքի ավագանու որոշումը ստորագրում է նիստը վարողը:*

*Այսինքն՝ դատարանում ներկայացուցչի միջոցով հանդես գալու կամահայտնության դեպքում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով լիազորագիր տալու հնարավորության բացակայության պայմաններում, համայնքի ավագանու կողմից ներկայացուցչին լիազորություններ վերապահելու հարցը պետք է քննարկման առարկա դարձվի համայնքի ավագանու նիստում և նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ որոշում կայացվի համայնքի ավագանու շահերը դատարանում ներկայացնելու համար մեկ կամ մի քանի անձի լիազորություններ վերապահելու մասին: Ընդ որում՝ նիստը վարողը պետք է ստորագրի համայնքի ավագանու որոշումը, որի բնօրինակը, որպես համայնքի ավագանու ներկայացուցչի լիազորությունը հավաստող պատշաճ ապացույց, պետք է ներկայացվի դատարան:*

*Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ համայնքի ավագանու ներկայացուցչի լիազորությունը հավաստող պատշաճ ապացույց է հանդիսանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ իրավակարգավորումների պահպանմամբ ընդունված՝ ներկայացուցչին լիազորություններ վերապահելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման բնօրինակը:*

*Տվյալ դեպքում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից, որպես վերջինիս ներկայացուցիչ, վճռաբեկ բողոք է ներկայացրել Իրինա Հակոբյանը, սակայն վճռաբեկ բողոքին կից չի ներկայացրել, ինչպես նաև սույն վարչական գործում առկա չէ վճռաբեկ բողոք բերելու համար վերջինիս լիազորությունը հավաստող պատշաճ ապացույցը:*

*Ինչ վերաբերում է վարչական գործում առկա՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 19 անդամների կողմից ստորագրված 08.10.2024 թվականի լիազորագրին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ չի կարող հանդիսանալ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից դատարանում ներկայացուցչություն իրականացնելու Իրինա Հակոբյանի լիազորությունը հավաստող պատշաճ ապացույց:*

*...Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն որոշմամբ նշված սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար անհրաժեշտ է սահմանել տասնհինգօրյա ժամկետ՝ սույն որոշումը ստանալու պահից:»*: **մեջբերման ավարտ:**

**Վերոգրյալը հիմք ընդունելով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից սահմանվել է սեղմ՝ 15 օրյա ժամկետ, առաջարկում եմ հրավիրել Գյումրի համայնքի ավագանու արտահերթ նիստ և ավագանու նիստում քննարկման առարկա դարձնել համայնքի ավագանու կողմից ներկայացուցչին պատշաճ կարգով լիազորություններ վերապահելու հարցը և տրամադրել ՀՀ վճռաբեկ դատարանի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ իրավակարգավորումների պահպանմամբ ընդունված՝ ներկայացուցչին լիազորություններ վերապահելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման բնօրինակը, ընդ որում՝ անհարաժեշտ է նկատի ունենալ, որ դատարանում առկա են 24 գործեր և բոլոր գործերով անհրաժեշտ է ներկայացնել վերը նշված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի վերոգրյալ իրավակարգավորումների պահպանմամբ ընդունված՝ ներկայացուցչին լիազորություններ վերապահելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը:**

Միաժամանակ Ձեզ եմ տրամադրում Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ 19.06.2025թ. դրությամբ իմ կողմից կազմված տեղեկանքը:

**Հարգանքով՝**

**Փաստաբան Իրինա Հակոբյան**

Digitally signed by HAKOBYAN IRINA 7901780371
Date: 2025.06.19 19:01:01 AMT

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| հ/հ | Վիճարկվող որոշում | գործի համար | Դատավարական պատմությունը | նիստեր | Այլ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գյումրու քաղաքապետ 17.09.2003թ. թիվ 1439 որոշում | ՎԴ5/0800/05/24 | 07.11.2024թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարանի Գյումրու նստավայր ընդդեմ Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 17.09.2003 թվականի թիվ 1439 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին:<br>14.11.2024թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում: (դատավոր Ն.Գասպարյան)<br>10.12.2024թ. հայցադիմումը կրկին մուտքագրվել է դատարան:<br>17.12.2024թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում: (դատավոր Ե.Առաքելյան)<br>10.01.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 17.12.2024թ. հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ:<br>21.02.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը կայացրել է որոշում վերաքննիչ բողոքը բավարարելու մասին և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշմամբ վերացվել է ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ5/0800/05/24 վարչական գործով 17.12.2024 թվականին կայացրած «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը: (դատավոր Ա.Պողոսյան):<br>ՀՀ վարչական դատարանի 26.05.2025թ. որոշմամբ (դատավոր՝ Հ.Մուրադյան) հայցադիմումն ընդունվել է վարույթ: | 2025 թվականի հոկտեմբերի 21-ին ժամը 17:00-ին նշանակված է նախնական դատական նիստ ՀՀ, ք.Երևան, Գ.Նժդեհի 23, 1-ին հարկ, թիվ 3 նիստերի դահլիճ | |

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Գյումրու քաղաքապետ 30.05.2006թ. թիվ 628 որոշում | ՎԴ/16635/05/24 | 30.12.2024թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 30.05.2006թ. թիվ 628 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին:<br>07.01.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու և հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին որոշումներ: (դատավոր Ա.Ներսիսյան) | 18.06.2025թ ժամը 12:15 Երևան, Գ.Նժդեհի 23, թիվ 16 դահլիճ | |
| 3 | Գյումրու քաղաքապետ 29.08.2006թ. թիվ 1111 որոշում | ՎԴ/15436/05/24 | 09.12.2024թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ 29.08.2006 թվականի թիվ 1111 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքներն անվավեր ճանաչելու պահանջի մասին:<br>17.12.2024թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձվելու մասին որոշում: (դատավոր Լ. Սադոյան):<br>21.01.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 17.12.2024թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ:<br>03.03.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը վերաքննիչ բողոքը բավարարել է (դատավոր Հ. Այվազյան):<br>ՀՀ վարչական դատարանի 29.05.2025թ. որոշմամբ (դատավոր՝ Լ.Սադոյան) հայցադիմումն ընդունվել է վարույթ:<br>ՀՀ վարչական դատարանի 29.05.2025թ. որոշմամբ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժվել է: /Ներկայացնել վերաքննիչ բողոք/: | 2025 թվականի նոյեմբերի 5-ին ժամը 11:00-ին նշանակված է նախնական դատական նիստ ՀՀ, ք.Երևան, Գ.Նժդեհի 23, 1-ին հարկ, թիվ 24 նիստերի դահլիճ | |

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Գյումրու քաղաքապետ 10.10.200թ. թիվ 1331 որոշում | ՎԴ/14599/05/24 | 20.11.2024թ. Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ 10.10.2006 թվականի թիվ 1331-Ա որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու, և հետևանքներն անվավեր ճանաչելու պահանջների մասին:<br>27.11.2024թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձվելու մասին որոշում: (դատավոր Ռ. Մաքեյան)<br>16.12.2024թ. հայցադիմումը կրկին մուտքագրվել է դատարան (վիճարկման հայցապահանջով):<br>ՀՀ վարչական դատարանը 24.12.2024թ. կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում: (դատավոր Գ. Առաքելյան)<br>15.01.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 24.12.2024թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ:<br>11.02.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը վերադարձրել է վերաքննիչ բողոքը: Վերաքննիչ բողոքը կրկին ներկայացվել և 27.02.2025թ.վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:(դատավոր Ա.Բաբայան)<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 21.03.2025 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» 21.03.2025թ. որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք:<br>ՀՀ վճռաբեկ դատարանը 15.05.2025թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշում սահմանելով վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու 15 օրյա ժամկետ: | | Վճռաբեկ բողոք |

## ՏԵՂԵԿԱՆՔ

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5 | Գյումրու քաղաքապետ 10.10.2006թ. թիվ 1330 որոշում | ՎԴ5/0125/05/25 | 17.02.2025թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 10.10.2006թ թիվ 1330 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջի մասին:<br>ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 10.10.2006թ.թիվ 1330 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջի մասին: Հայցադիմումով ներկայացվել են նաև միջնորդություններ՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու և փաստաթղթերը դատարանում դեպոնացնելու վերաբերյալ:<br>Դատարանի (դատավոր Ն. Գասպարյան) 24.02.2025թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:<br>Նշված որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որով խնդրել է վերացնել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ5/0125/05/25 վարչական գործով 24.02.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը: 19.03.2025թ. նշված բողոքը մակագրվել է դատավոր Արթուր Պողոսյանին:<br>Վերաքննիչ դատարանի 26.03.2025թ. որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.04.2025թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» 18.04.2025թ. որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: | | Վճռաբեկ բողոք |

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | Գյումրու քաղաքապետ 11.11.2006թ. թիվ 1430 որոշում | ՎԴ5/0804/05/24 | 07.11.2024թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 01.11.2006թ. թիվ 1430 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին:<br>14.11.2024թ. ՀՀ Վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձվելու մասին որոշում: (դատավոր Ն.Գասպարյան)<br>10.12.2024թ. հայցադիմումը կրկին մուտքագրվել է դատարան:<br>20.12.2024թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում: (դատավոր Ա.Ավագյան)<br>23.01.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 20.12.2024թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ:<br>29.01.2025թ. վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: 10.03.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է: (դատավոր Ա.Պողոսյան)<br>25.03.2025թ. ՀՀ վճռաբեկ դատարան է ներկայացվել վճռաբեկ բողոք ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 10.03.2025թ. վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշման դեմ: | | Վճռաբեկ բողոք |

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Գյումրու քաղաքապետ 18.12.2006թ. թիվ 1794 որոշում | ՎԴ/15446/05/24 | 09.12.2024թ. Հ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 18.12.2006թ. թիվ 1794 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքներն անվավեր ճանաչելու պահանջի մասին:<br>17.12.2024թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձվելու մասին որոշում: (դատավոր Հ.Մուրադյան):<br>24.01.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 17.12.2024թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ:<br>26.02.2025թ. վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: (դատավոր Ռ.Խանդանյան)<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.03.2025թ.որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.03.2025թ. որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: | | Վճռաբեկ բողոք |

# ՏԵՂԵԿԱՆՔ

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | Գյումրու քաղաքապետ 02.07.2007թ. թիվ 1153 որոշում | ՎԴ5/0145/05/25 | 25.02.2025թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 02.07.2007թ. թիվ 1153 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքներն անվավեր ճանաչել պահանջի մասին:<br>25.02.2025թ. մակագրվել է դատավոր Ն.Գասպարյանին:<br>04.03.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձվելու մասին որոշում:<br>24.03.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 04.03.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ:<br>10.04.2025թ. վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: (դատավոր Ռ.Մախմուդյան)<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.05.2025թ. վերաքննիչ բողոքը մերժվել է:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.05.2025թ. որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: | | Վճռաբեկ բողոք |
| 9 | Գյումրու քաղաքապետ 19.11.2007թ. թիվ 2169 որոշում | ՎԴ5/0200/05/25 | 11.03.2025թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 19.11.2007թ. թիվ 2169 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին:<br>21.03.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձվելու մասին որոշում: (դատավոր Ն. Գասպարյան)<br>03.04.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 21.03.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ:<br>15.04.2025թ. վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: (դատավոր Հ.Խաչատրյան) | | ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում քննության փուլում է |

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | Գյումրու քաղաքապետ 17.03.2008թ. թիվ 479 որոշում | ՎԴ5/0146/05/25 | 25.02.2025թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 17.03.2008թ. թիվ 479 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքներն անվավեր ճանաչել պահանջի մասին:<br>25.02.2025թ. մակագրվել է դատավոր Ն.Գասպարյանին:<br>04.03.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձվելու մասին որոշում:<br>24.03.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 04.03.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ: 09.04.2025թ. վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: (դատավոր Ռ.Մախմուդյան)<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.05.2025թ. վերաքննիչ բողոքը մերժվել է:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.05.2025թ. որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: | | Վճռաբեկ բողոք |

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Գյումրու քաղաքապետ 24.03.2008թ. թիվ 531 որոշում | ՎԴ5/0129/05/25 | 17.02.2025թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 24.03.2008թ. թիվ 531 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջի մասին:<br>24.02.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում: (դատավոր Ն.Գասպարյան)<br>10.03.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 24.02.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ:<br>26.03.2025թ. վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ (դատավոր Ա.Պողոսյան):<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 18.04.2025 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» 18.04.2025թ. որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: | | Վճռաբեկ բողոք |
| 12 | Գյումրու քաղաքապետ 07.05.2008թ. թիվ 916 որոշում | ՎԴ/16255/05/24 | 24.12.2024թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 07.05.2008թ. թիվ 916 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին:<br>27.12.2024թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու և հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին որոշումներ: (դատավոր Ա.Ղազարյան) | 24.06.2025թ. ժամը 12:00 Երևան, Գ.Նժդեհի 23, թիվ 15 դահլիճ | |

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | Գյումրու քաղաքապետ 11.07.2018թ. թիվ 1405 որոշում | ՎԴ/16496/05/24 | 27.12.2024թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 11.07.2018թ. թիվ 1405 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին:<br>03.01.2025թ.ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում: (դատավոր Գ.Առաքելյան)<br>23.01.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 03.01.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ:<br>17.02.2025թ. վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:<br>11.03.2025 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» 11.03.2025թ. որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: | | Վճռաբեկ բողոք |
| 14 | Գյումրու քաղաքապետ 11.07.2008թ. թիվ 1404 որոշում | ՎԴ/16654/05/24 | 30.12.2024թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 11.07.2008թ. թիվ 1404 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին:<br>07.01.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում: (դատավոր Ա.Ավագյան)<br>03.02.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 07.01.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ: Վերքաննիչ բողոքը մակագրվել է դատավոր Ռ.Մախմուդյանին:<br>01.04.2025թ. վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:<br>28.04.2025թ. ՀՀ վերաքաննիչ վարչական դատարանի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» 28.04.2025թ. որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: | | Վճռաբեկ բողոք |

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15 | Գյումրու քաղաքապետ 03.12.2008թ. թիվ 2695 որոշում | ՎԴ5/0131/05/25 | 17.02.2025թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 03.12.2008թ. թիվ 2695 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքներն անվավեր ճանաչել պահանջի մասին:<br>24.02.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձվելու մասին որոշում: (դատավոր Ն.Գասպարյան):<br>10.03.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 24.02.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ:<br>21.04.2025թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» 21.04.2025թ. որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: | | Վճռաբեկ բողոք |
| 16 | Գյումրու քաղաքապետ 13.01.2010թ. թիվ 35-Ա որոշում | ՎԴ5/0803/05/24 | 07.11.2024թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 13.01.2010 թվականի թիվ 35-Ա որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին:<br>14.11.2024թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձվելու մասին որոշում: (դատավոր Ն.Գասպարյան)<br>10.12.2024թ. հայցադիմումը կրկին մուտքագրվել է դատարան: ՀՀ վարչական դատարանը 17.12.2024թ. կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու և հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին որոշումներ: (դատավոր Ա.Ղազարյան) | 17.06.2025թ. ժամը 16:00 Երևան, Գ.Նժդեհի 23, թիվ 15 դահլիճ | |

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 17 | Գյումրու քաղաքապետ 17.09.2010թ. թիվ 2452-Ա որոշում | ՎԴ5/0050/05/25 | 23.01.2025թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 17.09.2010թ. թիվ 2452-Ա որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին:<br>30.01.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում: (դատավոր Ն.Գասպարյան)<br>01.03.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 30.01.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ:<br>20.03.2025թ. վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: | | ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը դեռ որոշում չի կայացրել |
| 18 | Գյումրու քաղաքապետ 12.10.2010թ. թիվ 2673-Ա որոշում | ՎԴ/16535/05/24 | 27.12.2024թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 12.10.2010թ. թիվ 2673-Ա որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին:<br>07.01.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու և հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին որոշումներ: (դատավոր Ա.Ներսիսյան) | 17.06.2025թ ժամը 12:45 Երևան, Գ.Նժդեհի 23, թիվ 16 դահլիճ | |
| 19 | Գյումրու քաղաքապետ 18.11.2010թ. թիվ 2971-Ա որոշում | ՎԴ5/0202/05/25 | 11.03.2025թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 18.11.2010թ. թիվ 2971-Ա որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքներն անվավեր ճանաչելու պահանջների մասին:<br>21.03.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում:<br>03.04.2025թ. ներկայացվել է վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 21.03.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ :<br>18.04.2025թ. որոշմամբ (Կ.Գևորգյան) վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ: | | ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը դեռ որոշում չի կայացրել |

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 20 | Գյումրու քաղաքապետ 24.02.2011թ. թիվ 649-Ա որոշում | ՎԴ/16462/05/24 | 27.12.2024թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 24.02.2011թ. թիվ 649-Ա որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին: 07.01.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու և հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին որոշումներ: (դատավոր Ա.Ներսիսյան) | 17.06.2025թ ժամը 12:30 Երևան, Գ.Նժդեհի 23, թիվ 16 դահլիճ | |
| 21 | Գյումրու քաղաքապետ 10.06.2011թ. թիվ 2387-Ա որոշում | ՎԴ/14562/05/24 | 20.11.2024թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ներկայացուցչի կողմից 20.11.2024 թվականին հայցադիմում է ներկայացվել Դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի կողմից 10.06.2011թ. թիվ 2387-Ա որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքներն անվավեր ճանաչելու պահանջի մասին: 28.11.2024թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում: (դատավոր Ա.Ներսիսյան) 09.12.2024թ. հայցադիմումը կրկին մուտքագրվել է դատարան: ՀՀ վարչական դատարանը 12.12.2024թ. կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու և հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին որոշումներ: (դատավոր Ա.Ներսիսյան) | 03.06.2025թ. ժամը 11:35 Երևան, Գ. Նժդեհի 23, թիվ 16 դահլիճ | |

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 22 | Գյումրու քաղաքապետ10.06.2011թ. թիվ 2386-Ա որոշում | ՎԴ5/0103/05/25 | 07.02.2025թ.ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 10.06.2011 թվականի թիվ 2386-Ա որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջի մասին:<br>14.02.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում: (դատավոր Ն.Գասպարյան)<br>04.03.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 14.02.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ:<br>07.04.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշմամբ վերքննիչ բողոքը վերադարձվել է:<br>Բողոք բերող անձը, կրկին դիմելով Վերաքննիչ դատարան՝ հստակեցրել է վերաքննիչ բողոքի պահանջը՝ խնդրելով. «վերացնել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ5/0103/05/25 վարչական գործով 14.02.2025թ. կայացված հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը»: Վերաքննիչ դատարանը 14.04.2025թ. որոշմամբ բողոքն ընդունել է վարույթ:<br>14.05.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է: | | ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել Վճռաբեկ դատարան |

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 23 | Գյումրու քաղաքապետ 03.04.2018թ. թիվ 570-Ա որոշում | ՎԴ5/0143/05/25 | 25.02.2025թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 15.04.2018թ. թիվ 570-Ա որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքներն անվավեր ճանաչել պահանջի մասին: Մակագրվել է դատավոր Ն.Գասպարյանին: 04.03.2025թ. ՀՀ վարչական դատարանը կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում: 24.03.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարան է ներկայացվել վերաքննիչ բողոք ՀՀ վարչական դատարանի 04.03.2025թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ: 07.04.2025թ. ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը կայացրել է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում: (դատավոր Կ.Գևորգյան) | | ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում դեռ ավարտված չէ |

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Գյումրի համայնքի ավագանու 26.07.2024թ. թիվ 161-Ա որոշմամբ նախատեսված թվով 24 որոշումների վիճարկման դատավարական ընթացքի վերաբերյալ**

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 24 | Գյումրու քաղաքապետ 03.09.2018թ. թիվ 1630-Ա որոշում | ՎԴ/15748/05/24 | 13.12.2024թ. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անունից հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրու քաղաքապետի 03.09.2018թ. թիվ 1630-Ա որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքներն անվավեր ճանաչելու պահանջի մասին:<br>Դատարանի (դատավոր Ա.Չիլինգարյան) 23.12.2024 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ 21.01.2025 թվականին ներկայացվել է վերաքննիչ բողոք:<br>ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանի (դատավոր Ս. Հովակիմյան) 07.02.2025թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է:<br>ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանի 07.02.2025թ. որոշմամբ մատնանշված սխալները վերացնելով՝ վերաքննիչ բողոքը կրկին ներկայացվել է Վերաքննիչ վարչական դատարան: Վերաքննիչ վարչական դատարանի 06.03.2025թ. որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ՝ այն Վերաքննիչ դատարանում ընդունված համարելով սկզբնական ներկայացման օրը:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 04.04.2025թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է:<br>ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» 04.04.2025թ. որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: | | Վճռաբեկ բողոք |

**Փաստաբան Իրինա Հակոբյան**

Digitally signed by HAKOBYAN IRINA 7901780371
Date: 2025.06.19 18:56:57 AMT